թնակեցոյ, վրաս չողորմեր ու ինձ գործ չդրա-
ներ. բայց քանի մի կողմ բան բանելով ինչ կա-
րող էի վատակիլ Մեռաք գրի որ գիտցած սա-
կաւ մի երաշխաւորութեամբս սակավ վատակիմ բայց
ես՝ սակս որ այն գիտցածս ալ բոլորովին մոռցել
էի, և ուրիշներու ուսուցանելու համար՝ ես
ինքն երկայն տաեն ուսանելու կարօտ էի։

Այլ զանազ գանձերն բոլորովին յոյս կորել
էի՝ երբ սատի երեք ամիս յառաջ Աստուծոյ ո-
զորութեամբն՝ Մարիանէ կոմսին հանգիստեցոյ՝
զոր Փորիզ տեսած էի, և զնոյն Ճանաչելով ի-
բրեն մտացոյ և Անդր-Ալիսի մարքեզին վրայոք
լուր հարցուցի։ Իւր տաւած պատասխանն՝ չատ
արցունք թափել տուաւ ինձ, որովհետև հօրս
մեռնիլն անսի իմացայ։ Ինքն ինձ զրուցեց՝ որ
մեռնելէն սակաւ մի յառաջ իւր ընտանեաքն
Պատրն գնացել էր, սակայն ձեր վրայոք բան մի
չկարաց ասել, բայց կարծեմ թէ գեռ նոյն քա-
ղաքն կը բնակին ասաց։ — Որչափ որ հօրս մա-
հուան վրայ ցաւեցայ՝ սակայն զձեզ գտնելու
յոյսս զնուազանցուց. կարծելով թէ այն փոք-
րիկ քաղքին մէջ զձեզ աւելի գիւրաւ պիտի
գտանեմ։

Ուստի մեռցած սակաւ առաջուս Ճամբայ ելի,
յուսալով որ Աստուած վերջապէս ինձ խեղճու-
թեանս կ'ողորմի, և ոչս անգամ պարապ չեմ
ելնիր. ամեն իրկանեանն ու պանդոկներն քա-
ղելէն ետու՝ մտածելի որ քաղքին բժիշկներուն
երթամ, որովհետև հայրս հոն մեռած լինելով
հարկաւ 'ի նոցանէ մին կանչուած պիտի լինիր
նորա հիւանդութեան ժամանակ. երկու երեք
բժիշկներ տեսնելէն ետու՝ վերջապէս բժիշկ
Շենքի հանգիստեցոյ՝ որ ձեր վրայ ինձ լուրեր
տուաւ, և ասաց որ գուք Ռոբէն Վիլնա գար-
ձել էք, և իւր բարեկամներէն միայն զիս ու-
զարկեց որ բժիշկ նայմէրը կ'տանիմ։ Այս
մարդս այնչափ բարի և արդար անձն մի երևցաւ
ինձ՝ որ առանց տարակուսելու իմ ով լինելս
նմա յայտնեցի և գլխէս անցածներն պատմեցի,
որոց վրայ շատ ցաւ զգալով երկայն տաեն ձեր
և իմ բարեսիրտ քրոջս վրայ ինձ հետ խօսեցաւ,
և ինձ յոյս և քաջալերութիւն տուաւ։ Նուա-
գէր ինքն առնուլ զիս ձեզ բերել, բայց ես
վախցայ որ գուք՝ իրաւամբ ինձ դեմ բարկա-
ցած լինելով պիտի չուզէիք զիս ընդունիլ ու
երեսս նայիլ։ Ուստի, մայրիկ, քոյ տաղնապ մի-
նորդ ու բարեխօս մի ուզելով գտնել Աննայի
վերհանձնութեան վատահացայ։ և բժշկին ա-
պրպռեցի որ մարդու բան մի չնասի, ինչպէս
որ խոստացաւ ալ։ և իմանալով թէ Աննա տան
առաւօտ Դպրեվանքն ուզին կ'երթայ շրջապա-
յելու՝ չատ օրեր եռևէ եռև ես ալ հոն գնացի
Եմիլիոս հետ միասին։ և թէպէտ քրոջս երես-
սին վրայ նկարած կը տեսնէի իր սրտին բարու-
թիւնն՝ սակայն չէի համարձակեր նորա տաքին
երթալու. այն տաեն միայն անկաս որ իմ տան-
տիկնոջս հետ զատակս զրկեմ։ Ա՛լ անսի յետոյ
եղածն գիտէք։ Հիմա Աստուած օրչափ որ ինձ
կեանք տայ՝ զձեզ սիրելու և ձեզ ծառայելու
համար անցընելով արդեօք պիտի կարող լինիմ
փոխարէն առնել այնքան չարիքս զոր գործեցի
այն բարեգութիւն քրոջս՝ որ իմ յանցանաց ընդու-
նելով զիս իր գրկաց մէջ ընդունաւ, և քան զամ-
ենայն պատուական մեր որդի՝ սիրոյն ապրեցու-
տուութիւն միայն հատուցի »։

կը շարունակուի. Տէր Մարտէն

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆԷ

ՀԱՄԱՌՕՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ի պէտս ազգային դպրոցաց

Հ. ՀՄԱՅԵԿԱՅ Վ. ՊԱՊԻԿԵԱՆ

ԲԱՆԱԼԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ՕՐԻՆԱԿԱՑ

ՆՈՑՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ

(*Ցնս տեղեկութիւնը Բազմավէպս կողքին վրայ*)։

digitised by A.R.A.R.@